

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Գ. ՄԽԻԹԱՐՅԱՆ (Թբիլիսի)

Հայ դրական կյանքը Վրաստանում հայ-վրացական կապերի կարևորապույն օղակներից մեկն է: Վրաստանում հայ գրական օջախի գոյության փաստն ինքնին վկայում է այդ կապերի արդյունավետության, երկու ժողովուրդների բարեկամության մասին:

Հարուստ է այդ օջախի պատմությունը և նշանակալից՝ նրա դերը սովետահայ գրականության պատմության մեջ: Սովետական կարգերի հաստատումից հետո Թիֆլիսի հայ մտավորականությունն աշխատում էր որոշել իր խնդիրները նոր պայմաններում: Այստեղ ստեղծվում են կրթական, թատերական, հրատարակչական և այլ հաստատություններ: Դրանք, առաջին հերթին, օգնում էին Երևանին «նյութական տվյալներով» և մարդկանցով: Գրականության, արվեստի, գիտության և լուսավորության շատ անվանի գործիչներ տեղափոխվում են Հայաստան, շոշափելի ավանդ ներդնում հայ նոր մտավորական կյանքի մեջ: Մյուս կողմից, իրենց շուրջը համախմբելով մնացած գործիչներին, այդ հաստատությունները թույլ չեն տալիս, որ հայ մշակութային, գրական, գեղարվեստական կյանքը Թիֆլիսում և Վրաստանում դադարի:

1920 թ. դեկտեմբերի 15-ին, ընդհատակյա պայմաններում, լույս է տեսնում «Կարմիր աստղ» թերթի առաջին համարը: Բայց մենշևիկյան կառավարությունը փակում է այն: Երբ Վրաստանում սովետական կարգեր հաստատվեցին (1921 թ. փետրվարի 25), «Կարմիր աստղը» վերստին սկսում է հրատարակվել: 1923 թ. փետրվարի 25-ից, Ալ. Մյասնիկյանի առաջարկով, թերթը վերանվանվում է «Մարտակոչ», 1927 թ. հոկտեմբերի 16-ից՝ «Պրոլետար»։ 1938 թ. օգոստոսի 12-ից՝ «Խորհրդային Վրաստան», 1940 թ. հոկտեմբերի 4-ից՝ «Սովետական Վրաստան»:

«Կարմիր աստղ» անլեզալ թերթը հայ աշխատավորներին կոչ էր անում համախմբվել կոմունիստական կուսակցության շուրջը և պայքարել Վրաստանում սովետական կարգերի հաղթանակի համար: Սովետական կարգերի հաստատումից հետո լույս տեսած առաջին համարը բացվում էր ողջունով՝ վրաց աշխատավորների տարած հաղթանակի առթիվ: «Կարմիր աստղում» հանդես էին գալիս Ալ. Մյասնիկյանը, Ս. Օրջոնիկիձեն, Ֆ. Մախարաձեն, Ա. Միկոյանը և ուրիշներ: Նրանում բաղմակողմանիորեն արտացոլվում էր Վրաստանի հարուստ առօրյան: Տպագրվում էին Ի. Ճավճավաձեի, Ա. Մերեթի, Ս. Տաբիձեի, Կ. Գամսախուրդիայի, Գ. Լեոնիձեի և այլոց ստեղծագործությունների հայերեն թարգմանությունները: Ե. Ջարենցի, Ա. Բակունցի և ուրիշների մի շարք գործեր առաջին անգամ հրապարակ են եկել Թիֆլիսի հայերեն թերթի էջերում: Հասարակական-քաղաքական և հատկապես գրականության ու արվեստի հարցերի վերաբերյալ հողվածներով հանդես էին գալիս Հ. Սուրխաթյանը, Պ. Մակինցյանը, Արշ. Մելիքյանը, Ա. Կարինյանը, Հ.

Ազատյանը, Ա. Հովհաննիսյանը և ուրիշներ, որոնք իրենց աշխատանքի արդյունքները թերթի միջոցով ներկայացնում էին հասարակայնության քննությանը: Թերթը տեղի մշակութային, գեղարվեստական, գրական կյանքի հայելին էր:

1921 թ. լույս է տեսնում Գարեգին Լեոնյանի խմբագրությամբ հրատարակվող «Գեղարվեստ» պարբերականի յոթերորդ գիրքը: Դժբախտաբար սա եղավ այդ հանդեսի վերջին համարը:

1922 թ. հուլիսին, Հ. Հակոբյանի խմբագրությամբ, սկսեց լույս տեսնել պրոլետարական գրողների ասոցիացիայի հայկական սեկցիայի օրգան «Դարբնոցը»: Նույն թվականի օգոստոսից՝ «Նոր աշխարհը» (խմբ.՝ Ս. Կասյան), 1924 թ.՝ «Դիրքերում» (խմբ.՝ Ա. Վշտունի), 1920—1930-ական թթ.՝ «Հոկտեմբեր», «Լուսաբաց», «Արշավ» և այլ պարբերականներ:

Գրականության, երաժշտության, նկարչության, թատրոնի աշխատողների 1921 թ. մարտի 29-ին կայացած խորհրդակցությունում որոշվում է արվեստի հայ աշխատողներին տրամադրված շենքը անվանել Հայարտուն և կոչել Վահան Տերչանի անունով: Ընտրվում է Հայարտան խորհուրդ, որի կազմի մեջ են մտնում Հ. Սուրխաթյանը, Պ. Մակինցյանը և ուրիշներ, որոնց ջանքերի շնորհիվ իրականացվեց հայ արվեստի տան հիմնադրումը: Խորհրդի անդամ ընտրվեց նաև հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որը մի որոշ ժամանակ ղեկավարեց նրա աշխատանքները:

Աստիճանաբար Հայարտան մեջ ձուլվում են արվեստի, գրականության աշխատողների առանձին խմբակներ, միավորումներ, այդ թվում նաև «Հայ գրչի մշակների միությունը», «Կոմիտաս» միությունը և այլն, ստեղծվում են մասնաճյուղեր: Երաժշտության մասնաճյուղում, որը ղխավորում էր Թումանոս Մելիքյանը, աշխատում էին Արմեն Տիգրանյանը, Դանիել Ղազարյանը, Արշակ Աղամյանը և ուրիշներ: Գ. Շարբաշյանի ղխավորած նկարիչների մասնաճյուղի մեջ էին մտնում Եղիշե Թադևոսյանը, Փանոս Թերլեմեզյանը, Ալեքսանդր Բաժբենուկ-Մելիքյանը, Գևորգ Գրիգորյանը (Ջոտո) և այլ նկարիչներ: Թատերական մասնաճյուղում աշխատում էին Արշակ Բուրջալյանը, Իսահակ Ալիխանյանը, Արմեն Գուլակյանը և ուրիշներ. ղեկավարն էր Ս. Քափանակյանը: Գրականության մասնաճյուղը ներկայացնում էին Հովհաննես Թումանյանը, Լեոն, Դերենիկ Դեմիրճյանը, Հ. Սուրխաթյանը և այլ գրողներ ու գրականագետներ: Այս թվարկումն արդեն ցույց է տալիս, որ Հայարտանը կենտրոնացած էին հայ մշակույթի լավագույն ուժերը:

Հայարտունը դառնում է հեղինակավոր կադմակերպություն, ղեկավարում հայ մշակույթի տարբեր ճյուղերի զարգացումն ու մասսայականացումը հանրապետությունում: Նրա հիմնադրումից մեկ տարի հետո՝ 1922 թ. մայիսի 28-ին, Թիֆլիսում տեղի է ունենում Վրաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի հայկական մասնաճյուղի հիմնադրմանը նվիրված հանդիսավոր նիստ: Մասնաճյուղի առաջին նիստում, որ տեղի ունեցավ հունիսի 1-ին Արվեստի պալատում, ընտրվում է նախագահություն (Հ. Հակոբյան՝ նախավահ, Մ. Արապի՝ նախագահի տեղակալ և Մ. Դարբինյան՝ քարտուղար):

Գրական և գեղարվեստական կադմակերպությունների վերակառուցման մասին Համկ(ր)Պ ԿԿ 1932 թ. ապրիլի 23-ի որոշումից հետո ստեղծվում է

Վրաստանի սովետական գրողների միության հայկական մասնաճյուղը, որն արդեն չորս տասնամյակ միավորում է հանրապետության հայ գրողներին:

Այն տարիներին գրական բանավեճերի կենտրոնում էր Եղիշե Չարենցը: Թբիլիսիում ևս սուր պայքար է ծավալվում Չարենցի ստեղծագործության շուրջը: Շատերն էին հանդես գալիս Չարենցի դեմ, սակայն առաջատար մարքսիստ-գրականագետներ Հ. Սուրխաթյանը, Արշ. Մելիքյանը և ուրիշներ հասկանում էին, որ խոսքը վերաբերում է տաղանդավոր մի բանաստեղծի, գրականության մեջ մի նշանավոր երևույթի, որին պետք է լավ հասկանալ: Հ. Սուրխաթյանը մշտապես ընդգծում էր, որ էմոցիոնալ ներգործության հըսկայական ուժ ունեցող նրա ստեղծագործություններն արտացոլում են Հայաստանի իրականությունն իր պայքարով, աշխատանքով ու հաղթանակներով: «Նրա հորիզոնը՝ համաշխարհն է, մոտիվները՝ միջազգային, որչափով համաշխարհային ու միջազգային են հեղափոխական պրոլետարիատի հեռանկարները: Սակայն այդ բոլորը բեկվում են նրա մեջ խորհրդային հայ միջավայրի պրիզմայով»¹:

Բազմակողմանի էին Չարենցի կապերը Վրաստանի և մասնավորապես Թբիլիսիի հետ: Բանաստեղծը հաճախ էր լինում Թբիլիսիում և մասնակցում տեղի գրական կյանքին, հանդես գալիս իր բանաստեղծությունների ընթերցումով: 1922 թ. սեպտեմբերի 13-ին, Հայարտան դահլիճում, նա ղեկուցում է կարդում Վահան Տերյանի մասին², իսկ 1923 թ. հունվարին ելույթ է ունենում «Պրոլետարական արվեստ» դասախոսության առիթով³: Արտասահմանյան ուղևորությունից վերադառնալուց հետո նա մի քանի օր մնում է Թբիլիսիում և «Մարտակոչ» աշխատակցի հետ ունեցած զրույցում պատմում է իր ստացած տպավորությունների, հայ գաղթավայրերի, Ավետիք Բսաճակյանի հետ ունեցած հանդիպման մասին⁴: Չարենցը ներկա է լինում իր «Կապկաղ-թամաշախի» ներկայացմանը, որ բեմադրել էին Թբիլիսիի № 89 դպրոցի աշակերտները⁵: 1926 թ. մայիսի 7-ին Հայարտան դահլիճում Չարենցը հանդես է գալիս «Պրոլետարական գրականության ուղիները»⁶ ղեկուցումով: Ավելացնենք, որ Չարենցը Վրաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի հայկական մասնաճյուղի անդամ էր:

Թբիլիսիում է Չարենցը գրել և ավարտել մի շարք բանաստեղծություններ, այստեղ առանձին գրքերով կամ տեղի հայկական պարբերականների էջերում տպագրվել են բանաստեղծի գործերից շատերը: Չարենցը Վրաստանին է փոխել «Տաղ սրտառուչ եղբայրական Վրաստանին» բանաստեղծությունը, որը ազատագրված եղբայրական ժողովրդին ուղղված ցնծագին խոսք է: «Զուգունե մարդը» մի ներբող է նոր կյանքի կերտողին, որի պատվին երախտապարտ վրաց ժողովուրդը հուշարձան է կանգնեցրել: Թբիլիսիում, Կոմունարների այգում Չարենցի ուշադրությունը գրավում է Վրաստանի կոմերիտ-

¹ «Մարտակոչ», 29 նոյեմբերի, 1924:

² «Կարմիր աստղ», 27 սեպտեմբերի, 1922:

³ Նույն տեղում, 11, 12 հունվարի, 1923:

⁴ «Մարտակոչ», 1 օգոստոսի, 1925:

⁵ «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին (Չարենցի հետ)», Երևան, 1961, էջ 323:

⁶ «Մարտակոչ», 13 մայիսի, 1926:

⁷ Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հատ. 6, Երևան, 1967, էջ 537, 780, 781:

միության հիմնադիր Բորիս Չնելաձեի արձանը: Եվ նա գրում է «երիտասարդ տիտանի» բանաստեղծական հուշարձանը՝ «Բորիս Չնելաձե» պոեմը:

Չարենցն անձամբ ծանոթ էր վրաց գրողներ Ն. Միծիշվիլուն, Ս. Չիրովանուն, Պ. Յաշվիլուն, Տ. Տաբիձեին, Մ. Ջավախիշվիլուն, Գ. Լեոնիձեին, Կ. Գամսախուրդիային ու այլոց: Նրանց հետ հանդիպումներ էր ունենում ոչ միայն Թբիլիսիում ու Երևանում, այլև Մոսկվայում ու Փարիզում: Նրանք սիրում էին Չարենցի «պայծառ միտքը և շոնդալից տաղանդը»⁸: «Մենք պետք է իրար ափելի լավ ճանաչենք, քան ճանաչել են Վաթա Փշավելյան ու Հովհաննես Թումանյանը»,— ասում էր Չարենցը⁹: 1929 թ. նա հրատարակում է վրաց գրականության լավագույն նմուշներից կազմված ժողովածու: Գրողների առաջին համամիութենական համագումարում արտասանած ճառում Չարենցը հպարտությամբ է խոսում Պ. Յաշվիլու և Տ. Տաբիձեի գեղարվեստական բարձր վարպետության մասին¹⁰: Հուլիս է եղել Ե. Չարենցի և Տ. Տաբիձեի բարեկամությունը: Չարենցի հետ ունեցած սրտաբուխ զրույցի ազդեցության տակ Տ. Տաբիձեն թարգմանում է Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա-Մահարին», իսկ Չարենցը հայերեն հրատարակում է իր բարեկամի աշխատությունը XIX դ. վրաց գրականության մասին, որպեսզի հայ ընթերցողները ծանոթանան իրենց եղբայրների գրականությանը¹¹:

Սովետական իշխանության առաջին տարիներին (մինչև 1925 թ.) Դերենիկ Դեմիրճյանը շարունակում էր ապրել Թբիլիսիում: Նրա մասնակցությունը տեղի գրական կյանքին անմիջական էր և խիստ արժեքավոր: Դեմիրճյանը Հայարտան ամենագործունյա անդամներից մեկն էր: Ուշադրության արժանի են Հայարտանը կարդացած նրա դասախոսությունները, որոնց մեջ նոր արվեստի այդ խոհուն շինարարն ու էնտուզիաստը արտահայտում էր իր մտքերը գրականության, երաժշտության, թատերագրության մասին¹²: Նա Թբիլիսիի հայ արվեստասեր հասարակայնության քննությանն է ներկայացնում իր «Դատաստան» դրաման նոր մշակմամբ: 1922 թ. հուլիսի 15-ին Հայարտան դահլիճում Իսահակ Ալիխանյանը հանդես է գալիս այդ պիեսի ընթերցանությամբ¹³:

Թատրոնին և թատերագրությանը նվիրված իր հոդվածներում Դ. Դեմիրճյանը ընդգծում էր թատրոնի՝ այդ ակտիվ արվեստի յուրահատկությունը և խոսում «սխեմատիզմի ու շտամպի» դեմ պայքարի անհրաժեշտության մասին¹⁴: Հոգվածներից բացի, Թբիլիսիի հայկական մամուլում Դեմիրճյանը տպագրել է գեղարվեստական ստեղծագործություններ, որոնք իրենց էությունով և նպատակով են սխեմատիզմն ու շտամպը:

Հասկանալի է, որ Դեմիրճյանը չէր կարող հեռու մնալ վրաց ժողովրդի, վրացական գրականության հետաքրքրությունների ոլորտից: Հայտնի են Դա-

⁸ Ս. Չիրովանի, Միշտ ինքնատիպ, միշտ հետաքրքիր, տե՛ս «Հիշողություններ Եղիշ Չարենցի մասին», էջ 36:

⁹ Նույն տեղում, էջ 34:

¹⁰ Ե. Չարենց, Գրականության մասին, Երևան, 1957, էջ 167:

¹¹ Տե՛ս Մ. Կարամյան, Редкая книга Т. Табидзе, «Заря Востока», 14 մարտի, 1962: Տե՛ս նաև «Գրական թերթ», 23 փետրվարի, 1962:

¹² «Կարմիր աստղ», 25 հոկտ., 1921, 1 հուլիսի, 8, 19 սեպտ., 1922:

¹³ «Կարմիր աստղ», 15 հուլիսի, 1922:

¹⁴ Տե՛ս «Կրոն», 1933, № 4: «Պրոլետար», 31 հունվ., 1930 և այլն:

վիթ Գուրամիշվիլի¹⁵, Ալեքսանդր Ղազբեգի մասին գրված հոդվածները¹⁶: Վրաստանում նա շատ բարեկամներ ուներ, որոնց մեջ առաջինը Կոնստանտին Գամսախուրդիան էր:

Գամսախուրդիան մեծ գովեստով ու սիրով է արտահայտվել իր հայ բարեկամի և նրա «Վարդանանքի» մասին: Այդ վեպի վրացերեն միջակ թարգմանություն մեջ անգամ նա տեսնում է «հզոր, բազմահմուտ առյուծի ճիրանները»: Գամսախուրդիան խոսում է հարևան ժողովրդի պայքարով, ողբերգականությունների և հերոսականությունների լի պատմության, Վարդան Մամիկոնյանի ճակատագրի մասին, որ հիշեցնում է վրաց շատ թագավորների ճակատագիրը: Գամսախուրդիան մեջ է բերում Վարդան Մամիկոնյանի ողջերթի խոսքը Վրաստան ուղարկվող ղեսպանին և ապա վրաց թագավորի պատասխանը. «Հայերը մեր եղբայրներն են: Նրանց կռիվը մեր կռիվն է»: Գամսախուրդիան վերհիշում է Դեմիտրյանի խոսքերն այն մասին, որ ինքը սիրում է Վրաստանը անշահախնդիր, ազգակցական սիրով. «Այս երկրի շքնաղ հողի վրա ես արել եմ իմ առաջին քայլերը: Այստեղ եմ անցկացրել մանկությանս ու պատանեկությանս տարիները, այստեղ եմ ստացել իմ բանաստեղծական մկրտությունը»¹⁷:

Թբիլիսիի սովետահայ գրական օջախում առանձնանում են Հակոբ Հակոբյանի և Նար-Դոսի անունները: Նրանք նշանավորում են նոր կարգերին, նոր գրականությանը բնորոշ հասարակական-քաղաքական և գրական խիստ էական երևույթներ:

Հակոբ Հակոբյանի գիտակցական կյանքի մեծ մասն անցել է Թբիլիսիում: Այստեղ է կոփվել հեղափոխական-բանաստեղծի մարտական ոգին, առնականացել նրա բանաստեղծական ձայնը: Հակոբ Հակոբյանը վերարտադրում է Վրաստանի, Թբիլիսիի հեղափոխական անցյալի գրվածներ, որոնց հերոսներն են «մոլեգին Ստեփանը», «Ֆանատիկ, բոլշևիկ ագիտատոր» Մելիտոն Ֆիլիան, «հրդեհի պես բռնկվող, կայծակի պես հարվածող» Սուրեն Սպանդարյանը, «անշափ կոնսպիրատիվ» Միխայիլ Յիսակյան, լեգենդար Կամոն, «հեղափոխության արծիվ» Սերգոն: Հ. Հակոբյանի ստեղծագործություններում Թբիլիսին ներկայանում է իր հեղափոխական առօրյայով, զգացվում է դասակարգային պայքարի շունչը: Հ. Հակոբյանը երգել է նոր Վրաստանը, աղվեսների երկիրը, ժողովրդի ստեղծագործ աշխատանքը, շինարարական եռուզեռը: «Յավի, բողոքի, ցասման երգերից, պայքարի, հաղթանակի երգերով դեպի կառուցման պոեմները» — այսպիսին է այդ բանաստեղծի ուղին, որը «ոչ միայն հեղափոխական-բանաստեղծ էր (հեղափոխական-բանաստեղծներ եղել են թե՛ ռուս, թե՛ եվրոպական գրականության մեջ), այլ նաև... սոցիալ-դեմոկրատ-բանաստեղծ, բոլշևիկ բանաստեղծ, պրոլետարական բանաստեղծ»¹⁸:

Նար-Դոսի ստեղծագործությունների մեծ մասը պատկերում է նախահեղափոխական Թիֆլիսն իր բարդ հակասություններով, հոգեմաշ կեն-

¹⁵ «Մնաթորի», 1955, № 9, էջ 43:

¹⁶ Դ. Դեմիտրյան, Երկերի ժողովածու, հատ. 8, Երևան, 1963, էջ 305, 306:

¹⁷ К. Гамсахурдия, Деревник Демирчян. «Литературная Грузия», 1963, № 6, էջ 64—66:

¹⁸ А. В. Луначарский, Собрание сочинений (в восьми томах), т. 2, էջ 369:

ցաղային դրամաներով: Այդ մասին պատմելով, հեղինակը նշել է, որ դա կշարունակվի «մինչև որ... մի նոր ջրհեղեղ գա և սրբի տանի... գիծ-Կեկեկների...», արևանների ամբողջ սերունդը իր բարքերով, սովորություններով, նախապաշարումներով, իր աղոթքներով ու անեծքներով...»¹⁹: Այդ «նոր ջրհեղեղը» Հոկտեմբերն էր: Հոկտեմբերյան հեղափոխությունը, նշել է Նար-Դոսը, աշխատավոր ժողովրդի առաջ նոր կյանքի լայն հեռանկարներ բացեց: Նա անսահման ուրախությամբ է խոսել կուտուրական հեղափոխության, գրականության նկատմամբ ժողովրդի մեջ արթնացած հետաքրքրության մասին: Կյանքի և գրականության նոր հեռանկարներով ոգեշնչված, Նար-Դոսը մասնակցում է գրողների միության հայկական մասնաճյուղի աշխատանքներին: Նա հանդես է գալիս նոր գործերով: 1920 թ. նա գրում է «Անհետ կորածը» պատմվածքը, որը վկայում է նրա աշխարհայացքում տեղի ունեցած բեկման մասին: Այս պատմվածքի հիման վրա գրողը նույն թվականին կերտում է «Հենակներով մարդը» դրաման, որ լույս է տեսնում «Գեղարվեստ» հանդեսում (1921, № 7): Թե՛ պատմվածքում, թե՛ պիեսում նա ցանկանում է թափանցել հասարակական, քաղաքական իրադարձությունների էության խորքը: Պատմվածքի հերոսը՝ Արամը, հասկանում է, որ իր դժբախտության մեջ հանցավոր են նրանք, ովքեր «նստած են այնտեղ, վերևը, գահերի և ոսկու տոսյրակների վրա: Նրանք են, ուր աշխարհը խառնել են այսպես՝ իրարից մի բան թոցնելու համար: Նրանք են, որ ինձ պես միլիոնավորների դժբախտության և արյան գնով ուզում են լցնել իրենց անկշտում որկորը: Ահա թե ում օձիքից պետք է բռնել և հաշիվ պահանջել»²⁰: Այսպիսի ընդհանրացումներ և եզրակացություններ նախկինում Նար-Դոսը չէր անում: «Մոտիկ անցյալից»²¹ պատմվածքը, որ նկարագրում է ձնշված աշխատավորի սոցիալական ինքնագիտակցության զարթոնքը, մեկ անգամ ևս վկայում է, որ գրողն սկսել է նորովի վերաբերվել այն նյութին, որը նախկինում անում էր իր ստեղծագործությունը: 1930 թվականին Նար-Դոսը հրապարակում է իր «Ես և նա» պատմվածքը, գրում «Վերջին մոհիկանները», որտեղ մենք կրկին հանդիպում ենք «նեղ օրերից մեկը» պատմվածքի հերոսներին, արդեն հեղափոխությունից հետո, նոր հանգամանքներում: Կյանքի վերջին տարիներին Նար-Դոսը աշխատում էր «նոր մարդը» վեպի վրա, որտեղ մտադրվել էր ցույց տալ իր հերոսների կյանքը պատերազմի Հոկտեմբերյան հեղափոխության տարիներին:

Նա թարգմանում է Մ. Գորկու պատմվածքները²², Լ. Ն. Անդրեևի «Զին սենատում» վոդևիլը²³, Ֆ. Մ. Դոստոևսկու «Խեղճ մարդիկ» վիպակը (1934), 1926 թ. հիշողություններ է գրում Սուրեն Սպանդարյանի մասին:

1931 թ. Թբիլիսիում նշվում է Նար-Դոսի գրական գործունեության 45-ամյակը: Հոբելյանական երեկոն տեղի է ունենում Ռոսթավելու անվան թատրոնի դահլիճում: Նիստը բացում է Վրաստանի լուսավորության ժողովրդական կոմիտարը: Ելույթ են ունենում արվեստի և գրականության հայ և վրացի գործիչներ, աշխատավորության ներկայացուցիչներ: Իր պատասխան խոսքում Նար-

¹⁹ Նար-Դոս, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1968, էջ 131—132:

²⁰ Նար-Դոս, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 7, Երևան, 1950, էջ 214:

²¹ «Կարմիր արև», վեցերորդ տարի, Երևան, 1923, էջ 14—17:

²² Տե՛ս նույն տեղում, էջ 48—52, 139—143:

²³ «Մարտակոչ», 7, 8 մայիսի, 1924:

Դոսն ընդգծում է «անհամեմատելի տարբերությունը», «սուր հակադրությունը անցյալի և ներկայի միջև»: Արդյո՞ք նախկինում գրողը «կհանդգներ երազել անգամ, թե նորին վայսերական մեծության լուսավորության պարոն միևիստորը իր բարձր հովանավորության տակ կաննի իր հոբելյանը և իր անհասանելի բարձունքից կիջնի նախագահելու իր հոբելյանական հանդեսը... Այդ անկարելի էր»²⁴:

Թբիլիսիում աշխատում էին գրողներ Մադաթ Պետրոսյանը, Մաթևոս Դարբինյանը և ուրիշներ, որոնց լավագույն ստեղծագործությունները մտել են հայ ընդհանուր գրական պրոցեսի մեջ:

Թբիլիսիի գրական կազմակերպությունը միավորում է այնտեղ ապրող գրողներին, շարունակում է մասնակցել հայ գրական կյանքին: Նա հայ և վրաց գրականությունների միջև ծառայում էր որպես կապող օղակ: Թբիլիսիի հայկական գրական կազմակերպությունը մեծ ծառայություն է մատուցել ժողովրդին, հատկապես հանրապետության հայ բնակչությանը, մեծապես նպաստել է երկու ժողովուրդների հետագա մերձեցմանը: Այսօր էլ նա շարունակում է այդ ազնիվ առաքելությունը: Ծ. Թորգոմյանը, Բ. Սեյրանյանը, Մ. Ասլանյանը, Մ. Քարամյանը, Հ. Կարայանը և ուրիշներ շարունակում են աշխատել հայ և վրաց ժողովուրդների ստեղծագործական կապերի ամրապնդման ասպարեզում:

Վրաստանում ապրող և աշխատող հայ գրողների համար բնորոշ է այն զգացմունքը, որ արտահայտված է Մարտին Քարամյանի «Լավվար» բանաստեղծություններում:

Հե՛յ հազարամյա
Իմ լավար սար,
Սահմա՞ն ես երկու երկրի միջև.
Քո բարձունքներում
Շրջում եմ հար
Ու հար շփտեմ, թե ո՞ւր իջնեմ:—
Մի կողմ Հայաստան իմ մայրն է մեծ,
Մի կողմ՝ Վրաստան մայրս բարի,
Ես ու դու մեկտեղ ու նրանց մեջ
Հանգույց ենք երկու ճանապարհի:
... Դու կամրջում ես հավերժաբար
Երկու ժողովուրդ, երկու երկիր:
Երկուսն էլ եղբայր
Ու սրտակից,
Բախտով ու հոգով
Միանման.
Երկուսի սերն էլ կանչում է ինձ,—
Այդ սիրով քեզ հետ մի՛շտ կմնամ²⁵:

Եղբայրության զգացումով է ներթափանցված Թբիլիսիի հայ գրողների կյանքն ու ստեղծագործական աշխատանքը: Մ. Քարամյանը հրատարակել է

²⁴ Ն ա ր - Դ ո ս, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1971, էջ 300—301:

²⁵ Մ. Ք ա ր ա մ յ ա ն, Հարազատ ձայներ, Թբիլիսի, 1961, էջ 5:

«Սրտի ձայն» ժողովածուն, որն ամփոփում է վրաց սյուների բանաստեղծությունները Հայաստանի մասին, նաև վրաց սովետական բանաստեղծների գործերի հայերեն թարգմանությունների երկու գրքույկ՝ «Հարազատ ձայներ» խորագրով²⁶:

Բանաստեղծ Հովհաննես Կարայանի համար մայրենի լեզու են թե՛ հայերենը, թե՛ վրացերենը: 1936 թ. «Կարմիր ծիլերում» լույս են տեսնում Կարայանի բանաստեղծությունները: Այդ ժամանակից սկսած հայկական թերթերում և ամսագրերում, պարբերաբար տպագրվում են նրա բանաստեղծություններն ու վրացերենից կատարած թարգմանությունները²⁷: 1948 թ. Թբիլիսիում լույս է տեսնում նրա բանաստեղծությունների ժողովածուն՝ «Հայրենական»: Դրան հաջորդում են նոր ժողովածուներ²⁸: 1964 թ. Թբիլիսիում տպագրվում է նրա բանաստեղծությունների գիրքը վրացերեն՝ Մ. Փոցխիշվիլու, Շ. Նիշնիանիձեի, Լ. Սուվաբերիձեի և ուրիշների թարգմանությամբ, իսկ 1970 թ. Կարայանը հրատարակում է վրացերեն գրված իր բանաստեղծությունների ժողովածուն՝ «Իմ վրացերենը» վերնագրով:

Որպես սովետական անհատականություն Հ. Կարայանը ձևավորվել է Վրաստանում և, բնականաբար, նրա ստեղծագործություններում ղգացվում է որդիական սեր, նվիրվածություն դեպի այդ երկիրը: «Ձայն վրաց հողից» ժողովածուի առաջաբանում Հ. Կարայանը դիմում է ընթերցողին այսպիսի խոսքերով. «Ես ծնվել, հասակ եմ առել Վրաստանում: Երբ ձեռքդ առնես այս փոնջը, կուգեմ, որ Արարատի վսեմ ճակատին նայելիս լսես Քոի ու Արագվայի քույրական շշուռը, իսկ Զանգվի կարկաշին ունկնդրելիս տեսնես Ղազբեգիի վեհապանծ նայվածքը»: Նրա գործերը իրոք ներծծված են երկու ժողովուրդների երկու երկրների անխախտ փոխկապվածությամբ:

Կարայանը շարունակում է իր արժեքավոր աշխատանքը վրաց գրողների գործերը հայ ընթերցողին ներկայացնելու ասպարեզում. նա ավարտում է Ռուսթավելու պոեմի թարգմանությունը, թարգմանում է վրաց սովետական բանաստեղծների, մասնավորապես Ռեվազ Մարգիանու և Մորիս Փոցխիշվիլու ստեղծագործությունները:

Վրաստանի սովետահայ գրական կյանքում ցայտուն կերպով արտահայտվում է երկու ժողովուրդների դարերից եկող բարեկամությունը, այն կենարար ուժը, որն ապահովում է սովետահայ գրականության ծաղկումը եղբայրական հանրապետությունում:

26 «Սրտի ձայն», Երևան—Թբիլիսի, 1970: «Հարազատ ձայներ», Թբիլիսի, 1961, 1963:

27 1937 թ. «Արշավ» և «Կարմիր ծիլեր» ամսագրերում, «Սովետական Վրաստան» թերթում հրապարակվում է լոթ հատված «Վազրենավորից» Կարայանի թարգմանությամբ: Շ. Ռուսթավելու 800-ամյակի օրերին նա ներկայացնում է պոեմի նոր հատվածների հայերեն թարգմանությունը:

28 «Սլացում», Թբիլիսի, 1956: «Ձայն վրաց հողից», Թբիլիսի, 1953: